

Քառանիստ

Հայտնի է, որ հնարավոր չէ կառուցել ոչ զրոյական մակերեսով եռանկյուն, որի կողմերի երկարություններն են 1, 2 և 3: Իսկ հնարավոր է արդյոք կառուցել 1, 2, 3, 4, 5, 6 երկարությամբ կողմերով ոչ զրոյական ծավալով քառանիստ բուրգ:

Մուտքը

Մուտքում տրված է $0 < n \leq 10000$ բնական թիվ: Հաջորդ n տողերից յուրաքանչյուրում գրված է, 1000000-ին չգերազանցող, 6 բնական թիվ:

Ելքը

Ելքում անհրաժեշտ է արտածել n տող: Յուրաքանչյուր տողում անհրաժեշտ է արտածել YES, եթե մուտքի համապատասխան տողում տրված կողմերով հնարավոր է կառուցել քառանիստ բուրգ: Հակառակ դեպքում պետք է արտածել NO:

Օրինակ

Մուտքը.

```
2
1 2 3 4 5 6
1 1 1 1 1 1
```

Ելքը.

```
NO
YES
```